

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ժր.

Վեցամսեայ . . . 7 Ժր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵԻԿ

Ծանոցման սուղը
20 տակերիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравунк"

ВАРНА

Գրութարանը եւ լեւ տրոսիր

2ր վճարող բաժանորդներու թիւը Յունիս 30 ին պիտի դադրեցնենք. Թող փութան վճարել :

ԹԵ ԻՆՉՈՒ ՉՈՒՆԵՑԱՆԸ

Ա.

Մեր մէկ պաշտօնակիցը իր վերջին խորագրականներով Մակեդոնիոյ Ներքին կազմակերպութեան մասին խօսելով, կը հարցնէ թէ « Ի՞նչի մէջ էլ չունի կարողացել Ներքին կազմակերպութեան գոնէ մասամբ միաձուլ ոյժ ստեղծել : »

Մեր նոյն պաշտօնակիցը ինքըն իրեն այս հարցումին պատասխանելով կըսէ .

« Այս բացասական կողմերէն բուն պատճառը գտնելուց յետոյ է, որ մենք պէտք է կարողանանք այն մէջանդից վերցնել եւ մեր յեղափոխական կազմակերպութիւնը դնել այն հաստատուն հիմքերու վրայ, որոնք անհրաժեշտ են ո՛ր եւ ժողովրդական շարժում զօրակոր եւ յարատեւ կերպով յառաջ տանելու համար : Այդ փաստակար պատճառներէն առաջինը այն է որ մեր յեղափոխական կազմակերպութիւնները անփոփ, լուրջ, հաստատուն սեղեկութիւններ չունին այն երկրի մասին, ուր ուզում ենք ապստամբութիւն առաջ բերել : Իսկ այս դառն իրականութեան պատճառը այն է որ մենք յուր, տեղական պայմաններէ, ժողովրդի հոգեբանութեան խորհրդրափանցող, ներթափանցող բոլորովին պահպանած Ներքին ազիստօրներ չենք ունեցել, կամ թէ ունեցել ենք շատ քիչ . . . : Երբեք չենք ունեցել զօրակոր, յուր, ինքնիշխան, գործի ամբողջ ծանրութիւնը եւ նրբութիւնները ըմբռնող մի կետրոնական կօմիտէ երկրի մէջ ուր յարատեւ գոյութիւն ունենար եւ շնորհիւ այդ գոյութեան կարողանալ կարգապահ, լուրջ, խորիմ յեղափոխական կազմակերպութեան առաջնորդ . . . : Մեր յեղափոխական կոչումը մտաւոր ուժերի ամենախոշոր քանակութիւնը միշտ տեղաւորել է արտասահմանում, արտասահմանեան գրաւոր եւ բերանացի պրօպանդանտա առաջ տանելու համար, որից երկրի ժողովուրդը յեղափոխական տարրը հա-

մարեա թէ չէ օգտվել : Արտասահմանը իր ազատ միջնորդութով, իր դիւրին պայմաններով, դիւրաւ փառաւորելու հրապոյրով գրաւել է շատ շատերին, մանաւանդ այնպիսիներին որոնք թէ ուզում են յեղափոխական տիտղոս կրել, թէ հանգիստ ապրել, ու իր պրօպանդանտայով սեղծած միջոցներէ մեծագոյն մասը վաճենք արտասահմանեան պրօպանդանտան եւ նրա փայլուն ու անփայլ ներկայացուցիչներին պահելու համար : »

Պէտք է հոս անմիջապէս յայտնենք թէ այս վերի տողերը գրողը Վարդան է, որ, թէեւ շատ ուշ բայց վերջապէս, ճշմարտութիւններ ալ յայտնելու ընդունակութիւն մը ցոյց տալ սկսած է վերջերս : Նոյնիսկ « Եւրոպի մտքեր » մղեալ նա այս ճշմարտութիւնները յայտնած ըլլայ, ինչպէս որ կ'ըսեն իր դաշնակցական ընկերներէն շատերը, մեզ համար ճշմարտութիւնը միշտ ազամանդ է եւ իր արժէքը ունի, եթէ սա ցեխերու մէջէն ալ դուրս քաշուի : Եւ մանաւանդ մեր տասնեակ տարիներէ ի վեր փառնանշած ազամանդն է այն, զոր դեռ մինչեւ երէկ նոյն Վարդան աւելի ցեխերու մէջ մխրձել կը ջանար ծածկելու համար, բայց այսօր մենք զարմանքով եւ իրենները գայթակղութեամբ կը տեսնենք թէ ինք իր ձեռքով զայն դուրս կը հանէ : Կը չը նորհաւորենք զինք իր այս ուշմնացած ծառայութեան համար :

Մեր այդ պաշտօնակիցը իր նոյն յօդուածի երկրորդ մասին մէջ կրկին կարգ մը ճշմարտութիւններ դուրս տալով միատեղ կը ջանայ ազգային աղէտներու պատասխանատուութեան հսկայ բաժինը ռուսահայ գործիչներու ուսէն տանկահայ « Խնտիկէն » ցիւղի ուսին բեռնել եւ այս վերջինը դատապարտել կարծեցեալ անդործութեանը համար : Իբր թէ տանկահայ մտաւորականները ազգային վերադարձումի եւ ինքնապաշտպանութեան գործի մասին անփոյթ կը նստին եղեր ինչ որ շատ ճիշդ չէ : Այլ անհերքելի ճշմարտութիւնը այն

է որ տանկահայ մտաւորականները, կամ առնց մէկ կարեւոր մասը, մօտէն եւ լրջօրէն ծանօթ տանկահայաստանի « ժողովուրդին հոգեբանութեան եւ տեղական պայմաններին » հարկ համարած էին նախ հայ ժողովուրդը պատրաստել ու բերել հասցնել զարգացումի եւ ինքնաճանաչութեան այն աստիճանին, յորում կարող ըլլար նա գիտակցօրէն իր փրկութեան գործին լծուիլ եւ մինչեւ ծայրը երթալ խիզարար կուրծք տալով ծագելիք ամեն դժուարութեանց :

Եւ արդէն, շուրջ կէս դար առաջ, տակաւ առ տակաւ սկսած էր տանկահայ ժողովուրդի զարգացման այդ գործը բուն իսկ տանկահայ մտաւորականներու ձեռքով, թէեւ յուշիկ յուշիկ բայց ապահով եւ առանց խտրեցնելու իսլամ ամբօրը եւ առանց կառնեցնելու թուրք կառավարութիւնը, որուն հայ ժողովուրդին վրայ ունեցած հաւատարմական վստահութիւնը տակաւին երկար տարիներ հայ գաւառացիին պիտի թոյլատրէր գիտակցօրէն եւ ներքնապէս ուժեղ յեղափոխական կազմակերպութեամբ մը օժտուելու : Եւ այդ սկզբնաւորութիւնը արդէն եղած էր Բարձր Հայքի մէջ, իրեն կեդրոնատեղի ունենալով Կարինը, նաեւ ուրիշ կողմեր, ինչպէս Փոքր Հայք, ուր հայ երիտասարդութիւնը ինքնապաշտպան ըլլալու եւ ընկերութիւններ կազմելու անգոյսք եռանդով մը վառուիլ սկսած էր : Եւ այդ տեսնները ռուսահայ գործիչի մը քղանքը անգամ չէր տեսնուած ամբողջ տանկահայաստանի մէջ : Այս որոշ փաստ է թէ տանկահայոց զարթումը որ լուիկ բայց ապահով կերպով դէպի մեծ նպատակը կը յառաջանար, ռուսահայ յեղափոխականներու ձեռքով չէր սկսած :

Իսկ սա անհերքելի եւ դառն ճշմարտութիւն է որ տանկահայ աղէտները այդ ռուսահայ յեղափոխական կոչումը գործիչներու շնորհիւ սկսան, եւ ասոնց պատ-

ճառաւ ալ տանկահայոց վերադարձումի եւ հայրենասիրական ներքին կազմակերպութեան համար սկսուած լուրջ գործը վիժեց ու տեղի տուաւ աղմկային եւ ցուցադրական խառնաշփոթութեանց : Թէ ինչպէս, համառօտակի կը բացատրենք մեր առաջիկայ թիւով :

ՄԱՐՕՔԻ ԽԵԿԻՐԸ

ԵՒ ՄՕՏԱՆՈՒՏ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Դէպի Մ. Արեւելք լարուած աշտարակները բովանդակ աշխարհի, վերջերս սկսաւ փոխադրուիլ դէպի Մ. Արեւմուտք՝ Հիւսիսային Ափրիկէ, Մարօքեան երկիրը, որուն ի բնուստ, ունեցած հարստութիւնը շատոնց շատերու ախորժակներն ձգած էր առ ինքն, բայց այդ մեծ եւ իւզոտ պատան լուրջ 10 միլիոն բնակիչ հրեայ, խափշիկ, Մաւր, Պէրպէր եւ Արապ, 812,300 քիւ, տարածութիւն) կ'ըլլու ո՞վ պիտի լինի կարողն : Մեզ ցոյց պիտի տայ ժողովուրդ պատերազմը :

Թերեւս շատեր ժողովուրդ պատերազմի մը հաւանականութեանը հսկառակին, բայց 1870-էն ի վեր տեղի ունեցած քաղաքականութիւնը իր զանազան դրուագներով զայդ կը հաստատէ : Որ կը բովանդակի այս պարբերութեան մէջ « Անգլոսապաշարականութեան ձգտում » : Եւ ամէն կառավարութիւն բացի Թիւրքէն այդ սկզբման զոհած է շատ բան, եւ պատրաստ է զգնելու տակաւին շատ բաներ ալ, թէեւ կառավարութիւններն յայտնապէս իրենց զէնքերն մէկզմէկու դէմ լարած չեն իրեւ թէ, ու խաղաղասիրական կեղծ դիմակի տակով մէկզմէկու ալ թակարթ լարել չեն խպնիր, նկատելով զայն անհրաժեշտ պահանջ, այդ պահանջի ստիպման տակ Մարօքը պիտի պատուէ չպարեալ կեղծ դիմակը : Ձրանասցիք մեղրամոմի նման մեղմացած, պատերազմի արհաւիրքներէն խուսափելու միտումով կը զինանքն գլուխ ծռել Գերմանացւոց, եւ Գերման դիւանագիտութիւնը իւր այս տարած յաղթանակէն արքիւռ երկայնի մը մէջ կ'իյնայ իւր երկու ոտքովը՝ ակնաստը ինկած մուկի նման, զի ռուս-ճարօն պատերազմէն օգտուելու միտումով Մարօքեան խնդիր մը յա-

բոց, այժմ Անգլիացիք ամէն գնով պիտի մերժեն այդ խնդրոյ կարգադրութիւնը: Եթէ Գերմանք ի նպատակ իրենց տրուած որոշումը պաշտպանել չգիտնան, այլ տեղի տան Անգլիոյ պահանջներուն, այն ժամանակ կը ստրկանայ իրենց այսքան տարուան վաստակած քաղաքացւոյն մեծ համայնքը: Իսկ եթէ տեղի չը տան հարկէ եւ ար չափուն Անգլիացիք հետ: Անգլիացիք բաւական հաշիւներ ունին կարգադրելիք որ այս պատերազմով պիտի կարենան յաջողցնել, զի Անգլիացիք վարժ էր ըսելու, «Ուր որ ցամաք կայ, հոն իմ ապրանքներս պիտի գտնուին. իսկ ուր ու ջուր իմ մարտն ու Գերմանք հետգնեալ Անգլիացիք այս աշխարհակալութեան ձգտումին բաւական մեծ արգելք եղած են, եւ հաշուուած է միանգամայն թէ, եթէ Գերմանք այսպէս 50 տարի եւս շարունակեն Անգլիացիք պիտի դատապարտուին անդործութեան: Եւ Անգլիացիք իրենք ալ արդէն պատերազմի մը պէտքը երկու տարի է զգացած եւ այսպէս յայտարարած են «Գաղափարութեանց սպառնալու սպառնալիցութիւնը սընտանկացեացած է աշխարհս, հարկ է վճարանալ ալ զսպառնալիցութիւնը, գործաւորներուն եւ գործարանատէրերուն նոր գործ ստեղծելու համար»: Ուրեմն Անգլիան պատեն ժամը ձեռք անցուցած լինել կը թուի, քանի որ Թրանսսիան, Իտալիան եւ ըսպանիան իւր հետեւորդներն են: Աւստրիան արդէն Ռուսաց նման իւր ներքին երկպառակութիւններէն զերուիս քերելու ժամանակ չունի, թողունք պահ մ'ալ Իտալիայէն յարձակում կընելու վախը: Կը մնայ Գերմանք առանձին իւր ապիկար Սուլթանի համարով: Ուրեմն հարուածը ըջեցնելու ճիշդ ժամը հնչած լինել կը կարծուի. եւ իցիւ թէ վաղորդ տեղի ունենայ, զի Ռուսաց ջախջախումէն վերջը անհրաժեշտ է որ Գերմանք ալ ջախջախուին, որպէս զի աշխարհի պոռնիկ քաղաքականութիւնը փրկարար չունի մ'առնէ:

Եւ բովանդակ մարդկութեան ճշմարիտ բարեկամներուն փափաքն ալ այս է արդէն:

Հ. Հ.

19 յունիս 1905

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԱ
ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԻ
ԱՌՋԵԻ

(Շարունակելի նախորդ թիւէն)

Եւ ինչպէս կարելի է սպասել որ Եւրոպացիք զինեալ միջամտութեամբ ոյժ տան «հայկական յեղափոխութեան», որպէս վերջի վերջոյ ըրին յունականին: Սաւորոյ վերջին ջարդէն առաջ՝ յեղափոխական ստաջնորդ մը ինքի կըսէր թէ Հայերս պարտինք սպասածութեամբ ցոյց տալ Եւրոպայի մեր ոյժը որպէս զի յարգութիւնք եւ հաշիւի առնուինք: Այո՛, պատասխանեցի, բայց եթէ ոյժ չունինք եւ միայն աղետարեր խլրտուցներ յառաջ ընելու յամառինք, փոխանակ յարգանք եւ աջակցութիւն առ մեզ հրաւիրելու, աւելի արհամարի կը հանդիսանանք ցոյց տալով ոչ միայն ուժի այլ եւ հասարակ ողջմտութեան պակասութիւն: Եւ իրօք տարական մը յայնմհետէ իր մէկ հըրատարակութեանը մէջ ըրած էր սա

երգիծական դիտողութիւնը թէ Հայերը տարօրինակ սովորոյթն ունին իրենց գէմ գիւմամբ հրաւիրելու այնպիսի վտանգներ որոց գէմ գրանելու միջոցներէն յայտնապէս զտրել են:

Իրեւն սկզբունքի խնդրի՝ հարկ է նաեւ ընդունիլ թէ ո եւ է ժողովուրդը որ յեղափոխութեան կը ձեռնարկէ պարտի ինք իր ուժերուն ապաւինած, իր միջոցներուն յենլով ոտքի ելլել, ոչ թէ օտարներուն զինեալ օգնութեանը վրայ յոյս դրնելով կամ բարեկէպ պատահուեքներու բաղադրաչափի հաշիւներով: Անիկա իրաւունք չունի մեղադրելու օտարները եթէ անոնք իրենց օգնութեան չեն: Անիկա իրաւունք ունի մեղադրելու միայն այն օտարը որ երեւն զինեալ աջակցութիւն խոստացած ըլլայ ու յետոյ զրթէ: Ճշմարիտն ըսելով ոչ մի օտար ուրու եւ ոչ իսկ օտար հայաստեանէն ո եւ է մէկը երբեք պաշտօնապէս կամ լոկ բարեկամօրէն յեղափոխական շարժումը յորդորած է զմեզ: Մեր ամենէն հին ու վտանգիլ բարեկամը, չէլմա Պրայս, օրինակ իմն, խրատած է զմեզ չմիւր մեր ուժերէն վեր ձեռնարկներու:

Ուրեմն եթէ մենք չնորձքով ապրտամբութեամբ մը ոտքի ելած ու սարկելով զիմացած իսկ ըլլայինք, իրաւունք պիտի չունենայինք օտար տէրութեանց զինեալ միջամտութիւնը ի նպատակ մեր պահանջելու: Մենք պարտեցինք մեր յաղթութիւնը ի զերուիս հանել ու յաջողութեամբ պահել: Անմիջապէս աւելցնել, սակայն, թէ Հայաստանի ինքնօրինութիւնը կամ անկախութիւնը այնքան սերտ կապակցութիւն ունի Արեւելեան խնդրին եւ Ռուսական շահերու ու եթէ, թուրքին յաղթէինք անգամ — ենթադրութեանց ամենէն ենթադրականը կընեմ — կընար Ռուսը մէջ մտնել, ու իր հետ բերել ուրիշ Տէրութիւն մ'ալ, ինչպէս ըրաւ անգամ մը ծայրագոյն Արեւելքի մէջ ու չմոռուց որ յաղթական ծառերը իր վարձքը առնէր, եւ ինչպէս ուրիշ անգամ մը Աւստրիոյ կայսեր թեր ելաւ ընդդէմ յեղափոխական Հունգարիոյ (1849), կընար, կըսեմ, մեր ալ յաղթութեանց պահէն զմեզ զերկել կամ զրկելու ջանալ: Այսպիսի ըսել հարկ էր զգացնելու համար թէ տոկուն, հզօր եւ յաղթական ապրտամբութիւնն անգամ որքան արգելքներու կընար դեռ հանդիպել կատարեալ յաղթութիւն մը ըլլալու ճամբուն մէջ:

Հայերս տոկուն, զօրաւոր, յաղթանարիչ ապրտամբութեան տեղ ինչ ենք ցոյց տուած՝ մեծ Տէրութիւններուն: Եւրոպա իրազէկ է թէ մեր բոլոր թմբկահարութիւնները 50 կամ 100 հոգիէ բաղկացած ոգորմնի խմբի մը շուրջը կը կատարուի, խուճի մը որ արտասահմանէն այսօր կը սպրդի կը մտնէ Տաճկահայաստան եւ մտադիր է վաղը փախչիլ Հայաստանէն: Ինչպէս մտաւ եթէ չպիտի կընար պատերազմիլ թշնամի բանակին դէմ, ինչ էր իր հաշիւը ձգտումը — իր հաշիւը ինքը գիտէր, ու աշխարհի ալ գաղանիք մը չէ, իր ներկայութիւնը ստիժ պիտի տար Ռուսը զօրաց խժժութիւններուն, կոտորածի, քարուքանդի, եւ ինքը, հայ անմեղ կիներու եւ մանուկներու դիակոյտները ետեւ թողած փախչելու ատեն՝ պիտի աղաղակէր Եւրոպայի որ օգնութեան հասնէր Հայոց: Ահա Դաշնակցականաց ամենափառ, ամենախայտառակ խաղը զոր

կը փորձին ապրտամբութիւն, յեղափոխութիւն կոչել:

Եղեկները իրենց աղետաբեր գործելակիւրիս արգարացումը կը կարկատեն հրէշային տրամաբանութեամբ կցկցելով սա երեք պատահականութիւնները — իւրտուժ, կոտորած, Եւրոպայի միջամտութիւն: Բազմակիւր փորձերը ապացուցին այդ գործելակիւրիս անտրամաբանականութիւնն եւ անխղճմտութիւնը, զի կոտորածները կրկին ու կրկին եկան, ապառտածէն տասնապատիկ անհղադոյն, սակայն եւրոպական արդիւնաւէտ միջամտութիւնը երբեք տեղի չունեցաւ:

Այս աղմկայտոյ կը արտաքսածին խմբերուն ըրածը ոչ միայն հեռի է ճշմարիտ յեղափոխութեան մը ընդմիջութեան, այլ եւ զուրկ է «տոմարութեան» ըլլալու յատկութեան: Հայաստանի ո եւ է մէկ կողմը երբ հաւրտահարեալ մը ինքզինք կամ իրեններն պաշտպանելու հարկին տակ՝ զէնքի կը դնէ, ինչպէս ըրին, օրինակ իմն, վարդիսիսի հարսնետուները ի պաշտպանութիւն հարսին (էջ 26), արարքը գովելի ու ազնիւ է, ինչ եւ ըլլան հետեւեալքը: Ինչեւ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԻ ՄԱՐԶԱՍԻ ՊԱՐՏԱՆՈՒԹԻՒՆԻ ՄԷ, եթէ ցաւալի բան մը կայ, այն ալ այդպիսի վեհանքն ու խիզախ ինքնապաշտպանութեան գէպերու հազուադէպ կամ բացակայ ըլլալն է Հայաստանի մէջ: Երբ անբաւականօրէն զինուածք՝ ըսպառազէն թշնամոյն, կամ քիչուոր խումբը՝ մեծ բազմութեան գէմ կը խիզախէ պատուոյ եւ արդարութեան զգացումներով եւ ելած, թէպէտ յաղթուի, իր ըրածը առաւ քրեական գործ մէ եւ եթէ ընդզում կոչել ու զենք գայն, կրնանք պատշաճօրէն որակել գայն իրեւ սոսմանութիւնը:

Հոս Դաշնակցական Պարտիները պիտի կարծեն հակասութեան մը մէջ ընկնել զիս: Եթէ ինքնապաշտպանութիւնը սրբազան պարտաւորութիւն է ո եւ է ատեն ու տեղ, ոչ ապաքէն Հայերը շատ տատապանքի պիտի ենթարկուէին եթէ այդ պարտաւորութիւնը կատարին: Իմ պատասխանս պարզ է: Երբ թրքերը նախադարձակ ըլլան, ինչպէս մեծ կոտորածին ատեն եղան, Հայերը մեծ վատութիւն կրնեն չը դիմադրելով, իրենց գէջ թէ աղէկ, քիչ թէ շատ զէնքերը գերագոյն կատաղութեամբ չգործածելով ինքնապաշտպանութեան համար:

(Շարունակելի)

ՓՈԽԱՐՔԱՅ ԲԵՐՁՆ
ԵՒ ՍՈՒԼԱՆԸ

Ապտիւլ Համիտ գէշ օրերու հանդիպած է: Ռուսիոյ Մանչուրիայի մէջ կամած աղէտքները եւ ներքին խռովանութիւնները իր սիրտը ահով կը յեղնեն, որովհետեւ նա լաւ կը հասկնայ թէ Չարի տէրութիւնը հանրային կարծիքէն մղեալ, ծայրագոյն Արեւելքի մէջ իր բրեթերին եկած նախատինքը պիտի ջանայ սրբել Պալքանիերու եւ Փոքր-Ասիոյ մէջ, եւ թէ անիկա հիմա ալ ոչ ուժեւ եւ ոչ ալ բաղձնաքը ունի զսպելու Պուրկարիոյ, Մակեդոնիոյ եւ իր ուրիշ Գրիստոնեայ արբանեակներուն, (կամ

(*) Թարգմ. «Պոսթոն Թրանսքրիբ» ամերիկեան թերթէն:

իր գերիշխանութեան տակ դառնաւ քրիստոնեայ աղգեբու): Ապտաւարական շարժումը: Ասկէ զատ, այնչափ նըմանութիւն կայ, Արեւմտեան տեւականէն նայելով, Ռուսիոյ եւ Թուրքիոյ կոտորածներէն հապէս Արեւելեան ձեւին մէջ, որ հիմայ մօտիկեան կայսրութեան վրայէն անցնող ժողովուրդային յեղափոխութեան ալիքներու ձայնը կը հասնի Բատիշանին տէրութեան ամէն կողմը: Թէպէտեւ Ռուսիա միշտ թուրքին ժառանգական թշնամին նկատուած է, սակայն այսօր չիկայ մէկը որ աւելի բաղձնաքը ըլլայ անոր Մանչուրիան բանակին յարդոյտքան եւ անոր չերքին ամբողջ խառնակութեանց կարգադրելուն, քան Ապտիւլ Համիտ:

Անգլիա հիմայ Ռուսիոյ տեղը անցած է իրեւ անոր վախի գլխաւոր առարկան: Նա Անգլիոյ մէջ կը սեննայ ամենամեծ վտանգը եթէ ոչ օտմանեան կայսրութեան գոնէ իր արքայական ցեղին: Նա լաւ կը հասկնայ որ Ռուսիոյ ձախողութիւնները Անգլիոյ պատահութիւններ կուտան, եւ թէ Չարին կատարութիւնը թէ՛ ներքին եւ թէ՛ զինուորական աղէտքներով ձնչեալ ամին նոր արկածէ վերջ աւելի անկարող պիտի ըլլայ Անգլիոյ ծրագրերներուն ալիքէք հանդիսանալու:

Լօրտ Բըրքըն այս ծրագրերու գործիքն է: Ոմանք կը հաւատան թէ նա այս ծրագրերը ստեղծողն է, բայց եւս աւելի հակամիտ եմ ատեն յղացումը վերադրել կալքթայի այն զարմանալի պաշտօնարանին որ հնդկական նմանութիւնն է: Լծնտոնի արտաքին գործոց պաշտօնատան եւ օրուի զերուիս էր, շատ մը տարիներ առաջ, այժմու Միացեալ Նահանգաց Անգլիական զեպպան Սըր Մօրթիմըր Տիւրանտ: Այս կարծիքը ուժ կառնէ այն իրողութենէն թէ, մասնաւորապէս Լօրտ Լանստուանի արտաքին գործոց քարտուղար դառնալէն ի վեր է որ Անգլիոյ Արեւելեան քաղաքականութիւնը աւելի գործունեայ եւ նախադարձակ եղաւ: Լօրտ Լանստուան մամանակ մը ծառայեց իր փոխարքայ Հնդկաստանի, եւ հոն եղած ատեն շատ խորունկ կերպով կը հետաքրքրուէր կալքթայի արտաքին գործոց պաշտօնատան գործերով եւ մեծ հիացում կը տածէր անոր պաշտօնեաներուն, մարդիկ որոնք Հնդկաստանի քաղաքական գործունէութեան շիղը կը կազմեն: Ասկէ զատ նա յարած այս պաշտօնատան նպատակներուն եւ թաէալներուն, իր արտաքին գործոց քարտուղար ըլլալն ի վեր ըրած է ամեն ինչ որ կարող էր ընել, պաշտպանելու անոց յառաջիկութիւնը եւ քաջալիքելու անոց գործադրութիւնը:

Յիւրաք այսօր Լանստոնի եւ կալքթութայի արտաքին գործոց պաշտօնատունները իրար հետ կը գործեն կատալեալ համեմատութեամբ: Ի մեծ առաւելութիւն Անգլիոյ շահերուն է Լաւատեղեակ շրջանակներու մէջ բաւական ծանօթ է այն իրողութիւնը թէ Լօրտ Բըրքըն աշակցութիւն կապաւէ Լօրտ Լանստուանէ, քան թէ Սըր Պրօտերիք որ Հնդկաստանի պետական քարտուղարն է:

Լայն կերպով խորհելով կալքթայի արտաքին գործոց պաշտօնատունը իրեն գլխաւոր նպատակ ունի, Հնդկաստանի վրայ Անգլիոյ

ունեցած տիրապետութիւնը զօրացը-
նել, նոյնպէս զօրացնել անոր գե-
րազանց ազդեցութիւնը այն հպատակ
եւ անկախ իշխանութեանց վրայ
որոնք կը գտնուին այն տեղերուն
մէջ որք կընան կոչուիլ հնգական
չըլնակ. նաեւ հակառակիլ որեւէ
փորձերու որ եւրոպական տէրու-
թիւններ կընան ընել կամ վր-
տանգելու Մայր հայրենիքի եւ Հնգ-
կանանի յարաբերութեան ճամբան
կամ հակադիրական էնթրիքներ
գրգռելու Աստուծոյ ընդ իշխաններու
եւ ժողովուրդին մէջ. Արդ, ամենէ
զօրաւոր աւարը Հնգակաստանի մէջ
է այն որ կընդունի իսլամ կրօն-
քը: Անդրիս հաւանարար 80,000,000
միւսլիման հպատակ ունի Տէք-
քան թերակղզոյն մէջ եւ առ նը-
ւազն 30,000,000 ալ Աֆրիկէի մէջ:
Յիւսիս Միտն Բրիտանիա առանց
բացառութեան, աշարհի ամենամեծ
մահմանական պետութիւնն է եւ իր
կառավարութեան ցուցուցած կրօնա-
նական թոյլտուութեամբ, եւ թէ
իր կառավարութեան եւ ժողովուր-
դին գէպի ըսլամի նախապաշա-
րութիւնը եւ սովորութիւններն ցու-
ցուցած յարգանքով, մերժելով Աս-
տուածաշուքը քանութեամբ առ ա-
նոնց որոնք իրենց փրկութեան յոյ-
սը Դորանին վրայ կը դնեն, Անգ-
լիա ուրիշ քրիստոնեայ տէրութիւ-
նէ մը շատ աւելի շահած է ժառ-
գարէին հետեւողներու վստահու-
թիւնը եւ քարեշէմնոցով թիւնը:
Մնգլիական գահը Հնգակաստանի
կառավարութիւնը Արեւելեան հնգ-
կական ընկերութեանն իր ձեռքը
առնելէն ի վեր կարողացած է
լրջիւն հաւատք ունենալ Տէք-
քան թերակղզիի մահմանական իշ-
խաններու եւ ժողովուրդի հաւա-
սարմութեան վրայ, եւ 80,000,000
մահմանականներն որ կը կազմեն
Հնգակաստանի ողնայարը թէ զինու-
թական եւ թէ անտեսական տեսա-
կետէն նայելով, վստահութիւնը փո-
խադարձ է, եւ միայն այն ամպերը
որ զայն վայրկեանապէս մթազնե-
լու երեւոյթ ունին, անոնք ալ
տեսնուած է որ Պոլսոյ ներկայ
Սուլթանի ազդեցութեանն ծնունդ
կանեն:

Շատ մը տարիներ Անգլիա կը
հանդուրժէր Սուլթանին խալիֆայու-
թեան նկատմամբ ունեցած յաւակ-
նութեանց, այսինքն անոր ամբողջ
մահմանական իկնդեցոյ գերիշխա-
նութեանը, Պոլսը Թուսթոյ ձեռքը
իշխած տեսնելու վախը, աւելի այս
էր պատճառը որ Անգլիա Բալթի-
կան դարձաւ Բ. Դրան գաղտնի եւ
անոր պաշտպանութեան համար մե-
ծաքանակ Բրիտանական արիւն եւ
հարստութիւն վաճակ:

Բայց Ապրիլի Համիտ ինքզինքը Պոլ-
սոյ մէջ ամէն հակաբրիտանական էն-
թրիքներու տալու պատրաստութեամ-
բը, եւ Անգլիոյ խորհուրդները ըն-
դունել զմիտակնելուն պատճառաւ,
շատոնց համոզեց կալիֆութեան եւ
Լոնտոնի քաղաքագէտները թէ իր
խելամիտ կրօնական պետը նա ոչ
թէ միայն մշտական ազդիւր մըն
է խառն կուլթանց, այլ նաեւ լուրջ
վտանգ մը Անգլիական գահի մահ-
մանական ստացուածքներուն: Լաւ
ժամով ըլլալով Ստամբուլի յուսա-
հատ վիճակին, որ Սուլթանը
եւրոպական մէկ տէրութիւն
միւսին գէմ հանելու քաղաքակա-
նութեամբ միշտ վստահ է գրա-
նալու տէրութիւն մը պատրաստ,
(Ի սէր առաժմայ եւ վերջնոյն ի

ձեռք ձեռք ձգելիք առաւելութեանց)
Անգլիոյ գէմ կենալու, կալիֆութե-
ան արտաքին գործոց պաշտօնատե-
նը, մինչ Լորտ Լանտոնան փո-
խարքայ էր եւ Սըր Մորիսըր Տի-
րանտ անոր պետը, սկսաւ քննել
թուրք Սուլթանին խալիֆայութեան
մասին ունեցած պահանջները, եւ
շատ խորին քննութիւնէ մը վերջ
որուն մէջ մատակցեցան Հնգակա-
ստանի մահմանական դատանքի էն
ուսուլ անդամները, այն եզրակա-
ցութեան եկաւ թէ անոր յաւակ-
նութիւնները անհիմն են, եւ ամբող-
ջովն կը կենան սուր հիմքերու
վրայ: Դորանը, այսինքն անոր Հա-
տիքի Շէրիֆ կոչուած մասը, խիստ
կերպով կը տրամադրէ որ մահմա-
նական եկեղեցոյ խալիֆան, անոր
բարձրագոյն քահանայապետը—պէտք է
ուղղակի այդ հաւատքը հիմնողին
սերունդէն ըլլայ: Արդ Մէքքէի
մեծ Շէրիֆը կը լիցնէ տոնական
այս պահանջները, որոնցմէ նա
ուղղակի Մարգարէի թոռն Հասա-
նի սերունդէն է: Միւս կողմէ
Ապրիլի Համիտ չունի այս հաւա-
գամանքներէն եւ ոչ մէկը, իր
նախադրերը կը պատկանէին ցի-
ղի մը որ նշանաւոր էր Մարգար-
էին գէմ ունեցած թշնամութեամբ:
Նա միշտ իսկ ամենահեռու
կերպով չի կրնար Մահմադէտի սե-
րունդէն համարուիլ, եւ միակ հիմք
որուն վրայ կը դնէ իր խալիֆա-
յութեան պահանջները, վկայելի բայց
ոչ մէկ կերպով վաւերական պատ-
մութիւնէն է թէ, 1516 թն Գալիթի
վերջին Ֆաթիմայական իլալիֆան,
Եգիպտոսը նուաճող Սուլթան Սէլի-
մի ձգեց այդ պաշտօնը:

(Մնացեալը յաջորդով)

ՍՈՒԼԹԱՆԻ ՑԱՁՈՐԴԸ

Եւրոպէ մը աւելի է որ Բէմալեա-
տին էֆէնտին տեսած է, բայց Սուլ-
թանը հակառակ բոլոր աւանդական
սովորութեանց դեմ երկրորդ չէ կան-
չած իշխան Լուսուֆ Իզլէթիին որ
Բէմալեատինի մահուամբ գահուն օ-
րինաւոր ժառանգորդը կը մնայ ըստ
1517 թ Սուլթան Սէլիմ Ա. ի հաստա-
տած դրութեան:

Այդ իշխանը Ապրիլի Ագրիի որդին
ըլլալով, ըստ սովորութեան իրաւունք
ունէր Տօլմա Պաղէի պալատը բնա-
կելու որ իր հայրը չիքել տեսած է,
բայց ցարդ ինք չէ արտօնուած հոն
բնակելու:

Նա երեք անգամ խալիֆ րոգոքեց
իր այդ իրաւունքը չյարգուելուն դէմ,
բայց ոչ մէկ պատասխան չտացաւ:
Սուլթանին բռնած այս ընթացքը
հանգչեց իր յաջորդին որ իշխան Ռէ-
շատէ յետոյ գահակալելու իրաւունք
ունի եւ որ կըսուի թէ շատ
վստաստող է, մտածել կուտայ:

Ապրիլի Համիտ լաւ գիտէ թէ
ինք հիւանդ է եւ շատ չպիտի
ապրի, վճռած է գահին յաջորդու-
թեան կարգը փոխել ի նպաստ իր
սիրեցեալ Պիւրհանէտին որդոյն:
Բայց իր գաւազները չնդող միւս իշ-
խանները զրկելէ զատ, իր միւս
երեք գաւազներն ալ կը զրկէ որոնք
Պիւրհանէտինէ մեծ ըլլալով, աւելի
իրաւունք ունին գահաժառանգ ըլ-
լալու: Սուլթանը որոշած է այժմէն
իրեն նախ առաւելել Պիւրհանէտ-
ինը:

Ինք համոզեց իր չորս Նգոդները
թէ, քնք մօտ օրէ պիտի մեռնի ինք իր
բոլոր խորհրդակցներով: Եւ քարձը
պաշտօնատարներու շահը կը պահանջէ
այն առնել Սուլթանի հոշակել իշխան մը
(Պիւրհանէտին) որ պիտի չաջուրնակէ
հայրենական աւանդութիւնները եւ
անոնցմէ իւրաքանչիւր պիտի վե-
րահաստատէ իրենց պաշտօններուն եւ
առանձնաշնորհութիւններուն մէջ:

Այս նկերութեանց եւ դարձեւած-
ներուն հանգչեց, Միւսլիմանները
որ անհամբերութեամբ կը սպասեն
ներկայ գրութեան փոխուելուն, ըս-
կած են մահոգ ըլլալ, եւ եթէ
ստուգիւ համոզուին թէ Ապրիլ—
Համիտի եւ իր սիրականներուն ծը-
րապիւր ճիշդ այդ է, կրնայ խո-
վածութիւններ պատահիլ: Որովհետեւ
ժողովուրդը վստահ է որ եթէ Ռէ-
շատ էֆէնտին կամ Լուսուֆ Իզլէթի-
անը գահակալէ ազատական եւ նոյնիսկ
սահմանափակ, գրութիւն մը
պիտի սկսի եթէ սէ երկուց
ունի թէ կը յաւերժանայ բացար-
ձակ բռնապետութիւնը այսօրուան
կամ շատ կերպարածքի:

Կասկած չկայ թէ, իրօք, Ապրիլ
Համիտ անբուժելի հիւանդութեամբ
մը կը տառապի, հոգ չէ թէ ըլ-
լայ այդ հիւանդութիւնը ողնայարի
սինին մէջ քաղցկեղ մը կամ ըլլայ
ողնածուծի հիւնցած բորբոքում մը, Այս
հիւանդութեանց թէ՛ մին եւ թէ՛ միւսը
որոշ ժամանակի մը մահ կը պատ-
ճառեն:

Այս տեսակ հիւանդութիւն մ'ունե-
նալուն ապացոյցը այն է որ Սուլթա-
նին մասնաւոր բժիշկը Իպրահիմ պէյ
վերջերս Պիւրհանէտինը անհաշիւ
որ բժիշկներու կարծիքը առնելու
համար, իր վերադարձէն ի վեր նա
իր վահափառ հիւանդին ողնայարի
սինի տեղերը գործողութիւնը
հարկ տեսած է:

Կը խոսուի նաեւ Ռէշատ էֆէն-
տինի նկատմամբ անաւել կամ նո-
ւազ ծանր հիւանդութեան մը մա-
սին: Բայց զինք շատ մօտէն ճանչ-
ցող անձիւր կը հաստատեն վերա-
պաշտութեամբ մը թէ անոր առող-
ջական վիճակը վտանգաւոր չէ: Նա
տկար կազմութիւն մը ունի եւ ա-
ռաւել կամ նուազ հիւանդ խառ-
նուածք մը: Եթէ շատ պնդուած
տարածաշնորհներէն գուրս ուրիշ
զրոյցի մը հաւատք ընծայենք, ա-
տոնք ընդհանրապէս նոյն իսկ եր-
տղէն կը զրկին ուր չա՛հ ունին
վերը բացատրուած ծրարիւն տը-
գելքներէն մին վերնալուսնի մէջ:

Միւսնայնք չէ կարելի ըսել Եու-
սուֆ Իզլէթիին մասին որ առողջ
կաղմութիւն մը ունի եւ որ չը կր-
նար իր նկատմամբ իր հօրեղորդը Ըզ-
գացութեան մասին սխալիլ:

Նա կրնայ անգամ մը մեծ գրկանք-
ներով ետանայ բռնապետութիւն մը
Չրաղան պալատի յարակից մէկ մա-
սին մէջ, ուր Ապրիլի Ագրիի բոլոր
ընտանիքը փակուած էր մինչեւ Մու-
րաթի թաղաւորութեան վերջը Ապ-
րիլի Համիտի կուտակեցներուն
ձեռքով որ իր եղբոր գահընկեցու-
թիւնը կը պատրաստէր:

Եւսուֆ Իզլէթիինը գիտէ թէ
ինչպէս պաշտպանուելու եւ ինչ նա-
խադրուածութիւններ ձեռք առնելու է
որպէսզի չը հիւանդանայ խիստ ան-
պատեհօրէն:

(Գ. ԷՍՈՒՅԵԼԵՆ)

Անցեալ կիրակի օր Արմաշի
վանքին տաճարին մէջ չորս նոր
վարդապետներ ձեռնադրուեցան
Տ. Եղիշէ Եպիսկ. Գուրեանէ: Այս
նոր վարդապետները կոչուեցան
Տ. Պարգեւ, Տ. Շաւարշ, Տ. Պոսկ
եւ Տ. Շահէ Արեղայ:

—Կրօն. Ժողովը լուծեց ամուս-
նութիւնը Բաթրասի Օսմ. հիւ-
պատոս Յովհաննէս էֆ. Մաժակ-
եանի, որուն կինը ամուսնութե-
անէն առաջ Ժողովուրդական
Եկեղեցու տեղեկագրին, Յով-
հաննէս էֆէնտիի արտօնուեցաւ
ուրիշ մը հետ ամուսնանալու:

—Խառն Ժողովը իր վերջին
նիստին մէջ որոշեց Տ. Մով-
սէս Եպիսկ. Կէօմրիւքեանը Պան-
տրմա Ե Պալքէսէրի Պատր. փո-
խանորդ նշանակել իսկ Տ. Թա-
թուլ վ. Գուրեանն ալ նոյն պաշ-
տօնով Պիլէծիկ փոխադրել:

—Երուսաղէմի վանքին հաշիւ-
ները քննելու պաշտօն ունեցող
յանձնախմբի անդամները հրա-
ժարած են իրենց այդ պաշ-
տօնէն: Երուսաղէմի նախկին ե-
լեւմտից տեսուչը տարօրինակ
մարդ մը կերեւի, կամ գերը-
նական յատկութեամբ օժտուած
արարած մը, որուն հաշուի տես-
րակներուն իսկ ձեռք զպցնել
ուրիշներ չեն համարձակիր ու-
միշտ կը հրաժարին:

—Պոլսոյ Սոքրաւանդակ թէթքը՝
որ երկու շաբաթէ ի վեր դա-
դարման գատապարտուած էր,
սկսած է հրատարակուիլ նոր ար-
տօնութեամբ:

—Մոսկուայի Լազարեան ձե-
մարանի Տրդ. գատարանէն այս
տարի չըջանաւորու ելած են 10
Հայ երիտասարդներ, որոնց ա-
մէնն ալ Ռուսահայ են:

—Օրմանեան Պատրիարքը Պոլ-
սոյ մէջ թաղային աղջկանց վար-
ժարան մը այցելելով, հարցու-
ցեր է թէ աղջիկները թուրքե-
րէն գրել կարողալ ուսած են:
Տնօրէնը երկու աղջիկ հանելով,
ասոնց թուրքերէն գրել Ե թարգ-
մանութիւն ընել տուեր է:
Պատրիարքը ասկէ գոհ մնացած
ըսեր է. «Մեր աղջիկներուն բո-
լորովին անօգուտ է ֆրանսերէնը
եւ թէ անհրաժեշտ է որ օսմանե-
րէն սովորին, քանի որ այս քաղ-
ցըր լեզուն աւելի կտրեւոր ու
անհրաժեշտ է մեր աղջիկներուն
քան ս եւ է ուրիշ լեզու:

—Հանգուցեալ Յակոբ Պարա-
մանեանի ժառանգորդները խոս-
տացեր են 6—700 սակի նուիրել
ազգ. Հիւանդանոցի յարակից
շէնքերու շինութեան ի նպաստ:
—Տ. Յովհան քհն. Մանգակու-
նի Մարտիկայէ եկած է իր տու-
նը Թումայէ հոն փոխադրելու
համար:

—Նոյնպէս Տ. Սարգիս քհն.

Հարկպահան անցեալ օր քաղաքս
գալով իր կարասիները Սիլիստրէ
փոխադրած է :

Ինչպէս յունիս այլն խիթա
մընա գատար պօրճարընը հօտէ-
մէյէն ապօնէլէրիմիզէ կապէթա
կէօնտէրմէյէնէնիլ :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Սթանպօլտան գաջմըշ օլան
եալէրանտան Արիֆ պէյ Ռիզա
բաշա վէ ճէվզէթ բաշա 200,000
լիրա խթմէմիշ օլմաղլէ, Սուլթան
անլէրին կէրի տէօնմէսի իշիւն
մէզքիւր մէպլաղը վէրմէք հմր
իթմիշ տիր :

—Տէվլէթլէր պիր թարափտան
Մաքէթանիանըն մալիյէնէ իս-
լահաթընա չալըշմադտա վէ
Սուլթանը մալիյէնէ ճէտվէլի-
նի գապուլ իթմէկէ ինպար
էյլէմէքտէ տիրլէր տիրլէր թա-
րափտան Ռում վէ Պուկար գօ-
միթալար պիր պիրինի թաա-
գիպ իթմէքտէն մատա, մաղ-
լում վէ պիրթարափ քէօյլիւլէ-
րի քէնտի միլլէթլէրինէ մէն-
սուպիյէթի գապուլ իթմէտիք-
լէրի իշիւն էզմէքտէ տիրլէր :

Տէվլէթլէր հէր տալիմ մա-
լիյէն եանի բարա ճիհէթինի գօ-
վալմադտա օլտըգլարընտան
պիրթին ճարգ խրիսթիանլա-
րը պիր ասըրտան պէրու գան
աղլամադտա պուլընյօրլար :
Իշթէ պուտէ հէքմէթր մէտէնի-
յէթ տիր :

ԿԻՐԻՏ

Բլաթանիա շէհրինի ասըլար
զապթ իթմէք իսթէտիքլէրի վէ
րուս ասքէրինէ սիլահ աթթը-
լարը սէպէպլէ պիր րուս վէ պիր
ֆրանսըզ վարօրը ասըլարը թօ-
բա թուրմուշ վէ կէրի սիւրմիւշ
ըտը մէզքիւր վուգուլթտան
պիր գարըն էօլմիւշ վէ պիր էրքէկ
ասընաթէլէնմիշ տիրիթալիա վա-
բօրը պիր մըգտար ասքէր վէ
2 թօք գարայա չըգարմըշ տրր :

Ասըլար ատանըն իշէրլէրին-
տէն սահիլէ տօղրու իլէրլէ-
մէքտէ օլուպ պաղը քէօյլէր վէ
մէվզըլար իսթիւա իտէյօրլար :

Բըլթի Պլէօնըն պէյանը իւզ-
րէ պիր մըգտար ասըլար չիմալ
իսքէլէսինէ կիրուպ իզլէթտին
զալէսինի զապթ իթմիւշլէր մէզ-
քիւր գալէ քօլիթիգա միւթթէ-
հիմլէրինէ մալսուս մահպուս-
հանէ իմիշ մահպուս պուլընան-
լար գուրթուլմուշլար : Քէզա
իսթիւալըլար Գասթէլլիի Քէ-
սամօյը զապթ իթմիւշլէր վէ մու-
հաֆըզ ասքէրլէրի տաղըթմըշ-
լար :

ՐՈՒՍԻԱ

Բէթէրապուրկ ֆապրիգալա-
լարընտան 25000 իշճի եէնիտէն
թաթիլի մէշղուլիէթ իթմիւշլէր
տիր :

—Ասըլարտէ 26 մարէշալար
թարափընտան պիր պէյանիմէ
իքի մարէշալ Զարա թագաթիմէ
Ձէմաթօլարըն վէ պէլէտիլէլէ-
րին թալէպլէրինի թէէքիտ իթ-
միւշլէր : Եանի իսլահաթըն ին-
րասը վէ մէճլիսի միլլինին թէ-
ճէմիւսի իգթիզա օլտըղընը
արզ էյլէմիւշլէր : Զար մարէշալ-
լարըն թէքիթաթընը մէշնու-
նիյէթլէ իշիտիքտէն սօնրա
Մ. Պուլիկինին թէրթիպ իթտի-
կի իսլահաթ ճէտվէլիին թէտ-
գըզը պիրթէր պիրմէզ ինրասը-
նա պաշլանըլաճաղընը վէ միլ-
լէթին մուրախալարընտան
միւրէքէպ մէճլիսի ումուսինին
թօրլանըլաճաղընը սէօյլէմիշ
տիր :

—Քիլէվտէն պիրթիրիտիկի
իւզրէ, Բէտէթլէրին սանճագ ալ-
թընա տալէթինէ եահուտիլէր-
տէն Բէք աղլար կիթմիւշ օլմասը
սէպէպլէ, րուս էհալիսի հիտ-
տէթլէնուպ եահուտիլէրէ գարըն
նիւմայիշ իթմիւշլէր պուլարըն
տիրքեանլարընը խարապ էյլէ-
միւշլէր : Բօլիսլէր կիւճ հալլէ
ասայիշի իպգա իթմիւշլէր : Փա-
գաթ պիր գաշ քիշի եարէլէն-
միւշ տիր :

—Պիր թագըն չափիլընլար
Բէթէրապուրկ իշէրիսինտէ էվլէր
սօյմադտա իքէն խաղախլար իս-
թէ կէլուպ, 21 քիշի տէրտէսթ
խտէրլէր, ֆոգաթ պուլ էսնատէ
պիր զապիթ վէ 4 խաղախ եա-
լէնիլէր :

ԿԱՍԿԱՍԻԱ

Կապկասիատան շու իքի իւշ
կիւն զարֆընտա եէնի թէճա-
վիւզաթ խապէրլէրի իշիտիլմէ-
տի : Պուլտան էվլէթի նուս-
լսէմիլտէ տէրճ օլընտըլը իւզ-
րէ, կէօրիւնիյօրքի Ռուս հիւ-
քիւմէթի իսլամ ճանալարըլը
լարընը պաուրըմադ մէճպուրի-
յէթինի զոյրը հրա իթմիւշ տիր :
Էրմէնիլէրի էզմէք իշիւն իս-
լամլարա վէրլէն սուհուլէթին
Ռուսիա իշիւն թէհիլէք հասըլ
իտէճէկինի ֆարգ իթմիւշլէր :

Կապկասիատա զուհուր իտէն
սօն վուգուլթլար Ռուս հիւ-
քիւմէթինին գուրնազճա թէր-
թիպ իթտիկի պիր բլանըն սէ-
մէքէսի խալի Ագսաի ճարգտա
զալիպ պիր տիւշմանլէ ուզ-
րաշտըլը էսնատէ : Կապկասիա
կիպի էնվաի միլլէթլէրտէն
միւրէքէպ պիր էյալէթի սըն-
տըրմադ լաղըմ ըտը քի էրմէնի,
կիւրճի վէ իսլամ էնասըրը պաշ
գալտըրմայա մէյտան պուլմասըն
լար վէ պիրպիրինին էթինի
եէսինլէր :

Պու պապտէ րուս հիւքիւմէթին
թէշվիգինէ կիւրճիւլէր աթիգ
պուլընուպ գաբըլմատըլար իս-
լամլար իսէ ճէհալէթլէրի սէ-
պէպլէ գաբըլտըլար վէ տիւշիւ-
նէմէտիլէր քի նէթիճէսի քէն-
տիլէրի իշիւն էն տէհէթլի օլա-
ճագ : Շիմտի ճարօն մուհարէպէ-
սի գաբանտըլտան սօնրա՝ րուս
հիւքիւմէթինին իւք իշի կապկա-
սիտա էքսէրիյէթ թէշքիլ իտէն
իսլամլարընպուրընը չէտիտ թօ-
քաթլարլէ գըրմագ օլաճագ
զանն իտէրիլ : Մօստուրա-
սը կէօրիւնմէյէ պաշլտուր : Եիւզ-
լէրճէ մօլլալար վէ վաիլլէր թու-
թուլուպ խաղախլարաան գաթլ
օլընտըլտընը (Ռէյթըր) պիր-
տիրմիւշ տիր : տահա պուլըն
արգասը կէլէճէկինէ չիւքէ-
միլ Եօգ տըր : Իսլամլար պիր
գաշ հաթթա զարֆընտա րէնկ-
լէրինի մէյաանա վէրտիլէր :
«Ճէհատ» իլան իթմէք, ումուս
Սիւնի վէ Շիտի իսլամլարա տա-
վէթ օգուլմագ : Ռուսիանըն էն
չօգ սաղընտըլը նօթթա օլմաղ-
լէ, թիւրքիստանտա 4-5 սէնէ
էվլէլ եաբտըլը կիպի կապ-
կասիատա տալի եաբաճաղըն
ինաննըյօրը :

ՖՐԱՆՍԱ ՎԷ ԱՆՄԱՆԻԱ

Բարիստէն պիրթիրիտիկի իւզ-
րէ, Մարթ մէսէլէսինտէն տօլալը
Ֆրանսա վէ Ալմանիա պէյնինտէ
զուհուրա կէլէն միւրազաա խու-
սուսընտա իքի տէվլէթ պէյնին-
տէ շու նօթթալար իւզէրինէ ի-
թիլաֆ հասըլ օլմուշ :

Մարթըն թէմաթիլէթինի
սաղլամագ :

Մարթ Սուլթանընըն հիւ-
քիւմտարըլը հաթլարընա թօ-
գանմամագ :

Ինկիլթէրա վէ Ֆրանսա պէյ-
նինտէ կէյէն սէնէ իմզալանան
մուգալէլէնալէնին Մարթ ի-
շիւն օլան գարարլարընա րէպէթ
իթմէք :

Ֆրանսա միւսթէմէլէքաթընըն
սինթօրընա եաղըն մահէլլէրէ
տալիթ Ֆրանսայա խուսուսի հաթ-
լար վէրմէք :


Թէճէմիւլ օլընաճագ գօնֆէ-
րանսըն բրօկրամը Սուլթանտան
թանգիմ վէ թագաթիմ օլընուպ :

ՄՈՒՀԱՐԷՊԷ

Մէյտանը մուհարէպէտէն ալը-
նան հալիտիսաթ ուֆագ միւ-
տարէպէլէրտէն պահա իտէյօր-
լար : Թէնէրալ Լինէվիշ «Փիլան
նօթթատա պիր մըգտար ճարօն-
ը իլէրլէտի պիլ կէրի սիւրաիւք
պիլ էլէրի սօգուլտուգ՝ օնլար
կէրի սիւրաիւքաթմէքտէն մատա
նէ՝ էնէմիլլէթլի թէլէֆիյաթ
պիրթիրիյօր վէ նէ տէ եէնի պիր
մէվզըլ զապթ օլընտըլընը սէյ-
լէյօր : Ֆագաթ ճարօն մէնպա-

լարընտան ալընան հալիտիսլէր
պիր աղ ֆարգլը տըրլար : Թօ-
քիտան յունիս 22 թարիլի
րէսմի պիր թէլէկրաֆա պինանէն,
400 քիշիտէն միւրէքէպ պիր
ալայ րուս սիւլարիսի յունիս
19 տա պէօյիւկ թէլէֆիյաթլէ
կէրի սիւրիւլմիւշ վէ 18 թօք
իլէ պիր ալայ րուս թօքըլարը
իլմէօլիայա եաղըն ճարօնլար
իլէ սապահա գատար ճէնկլէշ-
տիքտէն սօնրա 400 քիշի թէլէ-
ֆիյաթլէ կէրի սիւրիւլմիւշլէր :
ճարօնլար 90 քիշի զալպ իթմիւշ-
լէր :

—Միւսալէհա միւզէքէրէսի ի-
շիւն իքի թարափըն մուրախա-
լարը թալին օլընմըլլար տըր :
Պու մուրախալար ճարօնըն
արզուսը իւզրէ, սուհնամէ թան-
զիմի իշիւն հէր պիր մէզուսի-
յէթէ հալիլ իմիւշլէր : Պիր րէ-
վալէթլէ կէօրէ, միւթարէքէի էն
էվլէլ գարարա ալաճագլար ֆա-
գաթ տիլէր թարափտան Ռուսիա
Մանչուրիա իշիւն եէնի ասքէր
թօրլար :



ՏԻՔԻՑ ՍԱՔԻՆԱԼԱՐԸ

ԱՆԵԱ ՎԷ ՈՒՃՈՒՋ

Գատընլարա, գօնտուրաճըլարա վէ
թէրլէրէ մալսուս էնվաի տիքիշ
մաքիւլարը վաճառ վէ Բրօվաթիա մա-
նիֆաթուրա մաղաղալարըլտա մէվ-
ճուտ օլուպ, ֆիլամճա պաշլարըն-
տան 100 տէ 30 նօգսան սաթմադա
օլտըլըլը կիպի, միւլթէրլէրէ սու-
հուլէթ օլմաղ իշիւն՝ հաթթատա 2-3
ֆրանկ էօտմէք շարթը իլէ վէրէսիլէ
տալի վէրմէքտէյիլ :

Սաթմաղըլը մաքիւլար գազաէն
սապաթլանըլար իսէ մալէթիմիզաթ
պուլընա մահիթ մաքիւլիսթ Մ. Յով-
հանէս Շիրինտան կիտուպ մէճանէն
թամիր իտէր վէ աճէմիլլէրէ էօյրէտիլ :
Քէզա էսկի մաքիւլար սաթըն ա-
լը վէ մարաթա իտէրիլ :

Վէրմէքտէ օլտըլըլը շու սուհու-
լէթլէրտէն պիլ իսթիֆատէն ալիա վէ
ուճուգ պիրթըն մաքիւլա սահիպի օլ-
մագ արզու իսլանլէրի էզ հէր ճիհէթ
խօշուս պըրազաճաղըլըլը վաա էյ-
լէրիլ :

ՄԻՔԱՅԷԼ Ս. ԳԱՊԱՍԱՅԵԱՆ

(Չիլէքճի օղլու)

Պաքսանըլար Ն. 233

ՊԱՇՏՕՆ ԿՈՒՉԷ

Հայերէն եւ Պուլկարիէն թղթակ-
ցու թեան կարող, նոյնպէս ֆրանսերէ-
նի եւ տոմարալալութեան տեղեակ
երիտասարդ մը պաշլտօն կը փնտէս օր
եւ է վաճառատան մը մէջ : Երաշխա-
ւորութեամբ :

Մանրամասնութեան եւ պայմանաց
համար գիրմը Իրաւունքի խմբագրու-
թեան :

Одговорились А. Курбетянъ
печатица П. Глушковъ и С.не—Варца